ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 15.01.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/207

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դոմս Միեր Անանյանի

Մասնակցությամբ՝ Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ի լիազորված ներկայացուցիչ՝ Ա. Պարանյանի (լիազորագիր տրված՝ 19.12.2018թ.)

Ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 13.12.2018թ. թիվ 27/26-3/23226-18 գրությամբ Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) 10.12.2018թ. գրության հիման վրա, 13.12.2018թ. թիվ 27/26-3/23226-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2.«Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուղղված 26.12.2018թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայարփի Քալանթարյան» ԱՁ-ն ճանաչվել է հաղթող ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ բուժհաստատությունում հայտարարված հանրային սննդի մատակարարման մրցույթում՝ ներկայացնելով ամենացածր գին և համապատասխանելով ներկայացված բոլոր պահանջներին:

Առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչվելուց անմիջապես հետո ամեն կերպ փորձ է կատարվել խոչընդոտելու ծառայությունների մատուցմանը, ինչի արդյունքում ստիպված ենք եղել բողոքարկել հայտը մերժելումասին որոշումը համապատասխանաբար՝ Գնումների բողոքարկման խորհրդին /Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին/:

Հաղթելով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված բողոքը /ԳԲԽ-ԱՄ-2018/07/ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի հետ 01.03.2018թ.կնքել ենք պատրաստի սննդի մատակարարման/մատուցման պայմանագիր և իրականացրել ենք ծառայությունների մատուցումը ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ում:

www.gnumner.am համացանցային կայքում 07.12.2018թ. պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ «Նարկոլոգիական հանրապետականկենտրոն» ՓԲԸ-ի և Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ի միջև 01.03.2018թ. կնքված պատրաստի սննդի մատակարարման պետական գնման թիվ <<ՆՀԿ-ԲՄԾՁԲ-18/1>> պայմանագիրը «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.3.-րդ կետի <<ա>> ենթակետի ուժով, քանի որ Կատարողի կողմից մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին: Վերոհիշյալ պայմանագրի լուծման հիմքում դրվել է <<ՄԱՎԱՍ Գրուպ>> ՍՊԸ-ի կողմից տրված սննդամթերքի մանրէաբանական հետազոտության համապատասխան արձանագրությունները:

Մասնավորապես, <<ՄԱՎԱՍ Գրուպ>> ՍՊԸ-ի կողմից 01.11.2018թ. սննդամթերքի մանրէաբանական հետազոտության թիվ 568 և թիվ 268/2 արձանագրությունների համաձայն՝ մակարոնով սուպի, հավի մսով ցորենաձավարովհարիսայի և մասուրի հյութի մեջ հայտնաբերվել են անհամապատասխանություններ:

Այնուհետև, <<ՄԱՎԱՍ Գրուպ>> ՍՊԸ-ի կողմից 15.11.2018թ. սննդամթերքի մանրէաբանական հետազոտության թիվ 590/2 և թիվ 590/3 արձանագրությունների համաձայն՝ կարտոֆիլով և մսով սուպի և թանի մեջ հայտնաբերվել են անհամապատասխանություններ:

- ***Իրավական հիմքերը և հիմնավորումները.***

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2)պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի <<ա>> ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. *խախտել է պայմանագրով նախատեսված* կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ *գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:*

«Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի և Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ի միջև 01.03.2018թ. կնքված պատրաստի սննդի մատակարարման մատուցման պետական գնման թիվ <<ՆՀԿ-ԲՄԾՁԲ-18/1>> պայմանագրի (այսուհետ նաև՝ Պայմանագիր) 2.1.-րդ կետի <<ա>> ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք

ունի՝ չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայություն պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

Պայմանագրի 2.1.3.-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Մ. Անանյանին հայտնում ենք, որ մատակարարման առաջին իսկ օրվանից ամեն կերպ փորձ է արվել բարդացնել և խոչընդոտել մատակարարման գործընթացին՝ մշտապես հղում կատարելով այն փաստին, որ ցանկանում են աշխատել հին մատակարարի հետ:

Նախ, փորձ էր արվում անհնարին դարձնել մատակարարումը, մասնավորապես՝ փոքրիկ հայերեն մակնշումներ էր պահանջվել յուրաքանչյուր ամենափոքր տարայի համար, այն դեպքում, երբ ներկայացվում էր, թե որտեղից է ձեռքբերվել ապրանքը, ինչպես նաև ապրանքի համապատասխանության սերտիֆիկատը: «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ն մշտապես խոչընդոտել է, որպեսզի մթերքները տեղափոխվեն ամբողջական տարաներով, որոնցում պատրաստվում են և բաշխվում են տեղում, այն դեպքում, երբ որևէ մեկին մինչ այդ չի արգելվել նման մատակարարումը: Մատակարարումը միշտ իրականացրել ենք սառնարանային պայմաններով սննդամթերքի համար նախատեսված տարաներում:

«Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի ղեկավարությունը հասկանալով, որ բավարարում ենք բոլոր պահանջներին՝ ներկայացրեց, որ տեղի է ունեցել թունավորում: Մեզ մոտ իրականացված ստուգման արդյունքում պարզվեց, որ համապատասխանում ենք սանիտարահիգիենիկ բոլոր պահանջներին: Այդուհանդերձ, առ այսօր մեզ չտրամադրեցին տեղեկատվություն, թե արդյոք իրենց խոհանոցը համապատախանել է սահմանված պահանջներին, թե ոչ և իրենց կողմից իրականացված

բաշխման արդյունքում չէ արդյոք տեղի ունեցել դեպքը:

Հասկանալով, որ անգամ ստուգման արդյունքում խնդիրներ չեն հայտնաբերվել և այդպիսով ևս չեն կարողանում խոչընդոտել մատակարարմանը՝ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ն պայմանագիր կնքեց «ՄԱՎԱՍ գրուպ» ընկերության հետ, որպեսզի պարբերաբար ստուգեն մեր կողմից մատակարարված մթերքները: Մեր կողմից ողջունվել է այդ նախաձեռնությունը, քանզի հույս ունեինք, որ այդպիսով կհամոզվեն մեր կողմից մատակարարվող սննդաթերքի որակի և անվտանգության հարցում՝ այդ մասին տեղեկացնելով նաև «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ին:

Այդուհանդերձ, ունեինք մտահոգություն, թե ինչու է, որ նախարարության կազմում գործող բուժհաստատությունը պայմանագիր կնքում ոչ պետական լաբորատորիայի հետ, այն դեպքում, երբ հենց ՀՀ առողջապահության նախարարության կազմում գործում են հավատարմագրված լաբորատորիաներ: Հենց այս մտահոգությունից ելնելով՝ մենք պայմագիր կնքեցինք պետական լաբորատորիայի հետ և խնդրեցինք «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ին, որպեսզի նմուշառման ժամանակ, որպես մեր ներկայացուցիչ, ներգրավվի աշխատանքին տեղյակ փորձագետ, որպեսզի նմուշառումն ու փորձաքննությունն իրականացվեն հավուր պատշաճի:

Արդյունքում ս. թ. հոկտեմբերին «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ն մեզ տեղեկացրեց, որ ցանկանում է մթերքը հանձնել փորձաքննության, խնդրեցինք սպասել մինչև ներկայանա համապատասխան փորձագետը: Այդուհանդերձ, առանց սպասելու փորձագետին՝ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ն պահանջեց, որպեսզի մեքենան գնա դեպի համապատասխան լաբորատորիա և արդյունքում նմուշառում իրականացվեց առանց մեր ներկայացուցչի՝ չտրամադրելով որևէ տեղեկատվություն նմուշառման գործընթացի վերաբերյալ: Այդ իսկ պատճառով պետական լաբորատորիայի աշխատակիցների կողմից չիրականացվեց փորձաքննություն՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ իրենց իսկ կողմից տրված մասնագիտական եզրակացության համաձայն ճիշտ նմուշառումն իրականացվում է կամ ընդհանուր տարայից, որտեղ պատրաստվել է ուտեստը կամ օգտագործման համար նախատեսված բոլոր տարաներից՝ վերցնելով միջին նմուշ, քանզի միայն այդ դեպքում է հնարավոր

եզրակացությունը տարածել ամբողջ խմբաքանակի վրա, իսկ այս դեպքում նմուշառումն իրականացվել է ոչ ընդհանուր տարայից, ոչ էլ ապահովվել է «միջին նմուշի» կարգը:

Ս.թ. նոյեմբերի 8-ին «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ստացել ենք նամակ, որ մատակարարված մթերքներում հայտանբերվել են անհամապատասխանություններ, և որ չի իրականացվելու վճարում այդ օրվա համար, ինչպես նաև պահվելու է փորձաքննության գումարը, և որ փորձարկումները կրելու են պարբերական բնույթ: Ուսումնասիրելով հետազոտությունների արդյունքերը՝ գտնում ենք, որ այդ եզրակացությունները չեն կարող համարվել հիմք մի քանի պատճառով. նախ՝

1. չի պահպանվել նմուշառման կարգը,
2. փորձարկումները իրականացվել են ԳՕՍՏ-երով, որոնք Հայաստանում չեն գործում, ինչը տեսանելի է Ստանդարտների ազգային ինստիտուտի պաշտոնական կայքէջում,
3. փորձարկումները իրականացվել են առանց «Հայարփի Քալանթարյան» Ա/Ձ-ի կողմի ներկայացուցչի մասնակցության:

Արդեն օրեր անց «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ն տեղեկացրեց, որ լուծում է պայմանագիրը միևնույն սխալներով 2-րդ անգամ իրականացված նմուշառման և հետազոտության հիմքով: Իսկ այդ օրերին կրկին մատակարարումը շարունակում է իրականացնել «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ցանկալի մատակարարը, ինչպես միշտ ոչ սառնարանային պայմաններով, արդեն ոչ իրենց կողմից «պարտադիր» համարվող մակնշումներով և այլն:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում նաև այն հանգամանքի վրա, որ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից «ՄԱՎԱՍ գրուպ» ՍՊԸ-ում կատարված փորձարկումները իրականացվել են ԳՕՍՏ-երով, որոնք Հայաստանում չեն գործում, ինչը նույնիսկ տեսանելի է Ստանդարտների ազգային ինստիտուտի պաշտոնական կայքէջում, բայց քանի որ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի մոտ առկա է եղել գերխնդիր անել ամեն ինչ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից իրավապարտադիր որոշման հիման վրա 01.03.2018թ. կնքված պայմանագիրը միակողմանի լուծելու համար, ապա «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ին մնացել էր միայն պայմանագիր

կնքել ՀՀ-ում գործող մասնավոր «ՄԱՎԱՍ գրուպ» ՍՊԸ-ի հետ, առանց Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ի կողմից լիազորված ներկայացուցչի կատարել փորձարկում և ավելին, փորձարկումը իրականացնել արդեն ՀՀ-ում երկար ժամանակ չգործող ԳՕՍՏ-երով:

Ինչ վերաբերվում է այն հանգամանքին, թե ինչու է 01.03.2018թ.կնքված պայմանագրի ավարտից հենց 20 օր առաջ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ն միակողմանի լուծել պայմանագիրը.

Այս կապակցությամբ հայտնում ենք, որ ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի և ՀՀ ԱՆ Ավան հոգեկան առողջության կենտրոն ՓԲԸ-ի տնօրենները ամուսիններ են և ս.թ. սկզբին «Հայարփի Քալանթարյան» ԱՁ-ն ճանաչվել էր հաղթող ոչ միայն ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից հայտարարված պատրաստի սննդի մատակարարման/մատուցման, այլ նաև ՀՀ ԱՆ Ավան հոգեկան առողջության կենտրոն ՓԲԸ-ի բուժհաստատությունում հայտարարված հանրային սննդի մատակարարման մրցույթում՝ ներկայացնելով ամենացածր գին և համապատասխանելով ներկայացված բոլոր պահանջներին:

Հաղթող ճանաչվելուց անմիջապես հետո 2 հաստատությունների կողմից՝ ամեն կերպ փորձ է կատարվել խոչընդոտելու ծառայությունների մատուցումը, ինչի արդյունքում ստիպված ենք եղել բողոքարկել նրանց որոշումները համապատասխանաբար ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից հայտը մերժելու մասին որոշումը՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում /Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ/, իսկ ՀՀ ԱՆ Ավան հոգեկան առողջության կենտրոն ՓԲԸ-ի կողմից հայտը մերժելու մասին որոշումը՝ դատական կարգով:

Ս.թ. դեկտեմբերի 3-ին Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը որոշել է՝ Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ի ներկայացված հայցը ընդդեմ ՀՀ ԱՆ Ավան հոգեկան առողջության կենտրոն ՓԲԸ-ի բավարարել մասնակի /թիվ ԵԴ/0251/02/18 քաղաքացիական գործ/:

Եվ հենց այս հանգամանքն էլ դարձել էր շարժառիթը այն բանի, որ ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ն որոշեց պայմանագրի ավարտից 20 օր առաջ միակողմանի լուծել այն:

Կից ներկայացնում ենք՝ <<Հանրապետական անասնաբուժասանիտարական և

բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն>> ՊՈԱԿ-ի /պետական լաբորատորիա/ կողմից 13.11.2018թ. տրված եզրակացությունը, որում մասնավորապես ասվում է, որ «ՄԱՎԱՍ գրուպ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ-ում երկար ժամանակ չգործող GOUS-երով կատարված փորձարկման արդյունքում՝ «ՄԱՎԱՍ գրուպ» ՍՊԸ-ի աշխատակիցները չեն կարող տալ որևէ եզրակացություն նմուշառման գործընթացի գործող նորմատիվներին համապատասխանելու վերաբերյալ:

Հայտնում ենք նաև, որ վերոնշված խնդրի վերաբերյալ հայտնել ենք նաև ՀՀ առողջապահության նախարարին և ներկայացված խնդիրը գտնվում է նաև ՀՀ առողջապահության նախարարության անմիջական հսկողության տակ»:

Ամփոփելով վերոգրյալը, Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ն խնդրել է հաշվի առնել ներկայացված փաստերը և փաստական հանգամանքները և Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ին չվերագրել <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի <<ա>> ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել <<Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում>>:

Ի լրումն վերոհիշյալ գրության Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ն 08.01.2019թ. գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«28.12.2018թ.-ին տեղի ունեցած նիստի ժամանակ Ձեր կողմից հարց բարձրացվեց՝ նմուշառման կարգի խախտումների վերաբերյալ, մասնավորապես՝ «Հայարփի Քալանթարյան» Ա/Ձ-ն որտեղից է տեղյակ նմուշառման կարգի խախտումները և փորձարկումները՝ առանց «Հայարփի Քալանթարյան» Ա/Ձ-ի կողմի ներկայացուցչի մասնակցության կատարելու մասին:

Վերոգրյալի հետ կապված հայտնում ենք, որ 2018թ. հոկտեմբերին «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ից Ա/Ձ-ին տեղեկացրեցին, որ ցանկանում են մթերքը հանձնել փորձաքննության, որին ի պատասխան «Հայարփի Քալանթարյան» Ա/Ձ-ն խնդրել է սպասել մինչև ներկայանա համապատասխան փորձագետը: Սակայն «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ն առանց սպասելու «Հայարփի Քալանթարյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացուցչի՝ պահանջել է, որպեսզի սնունդ տեղափոխող մեքենան գնա դեպի համապատասխան մասնավոր լաբորատորիա և արդյունքում նմուշառում իրականացնի

առանց Ա/Ձ-ի ներկայացուցչի՝ չտրամադրելով որևէ տեղեկատվություն նմուշառման գործընթացի վերաբերյալ:

Ձեր ուշադրությունն ենք հրավիրում նաև այն հագամանքի վրա, որ «Մավաս գրուպ» ՍՊԸ-ի աշխատակիցների կողմից խախտվել է նաև փորձաքննության իրականացման կարգը: Մասնավորապես, «Մավաս գրուպ» ՍՊԸ-ի կողմից տրվել է եզրակացություն՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ իրենց կողմից կատարվելիք փորձաքննությունը պետք է իրականացվեր ընդհանուր տարայից, որտեղ պատրաստվել է ուտեստը կամ օգտագործման համար նախատեսված բոլոր տարրաներից՝ վերցնելով միջին նմուշ, քանզի միայն այդ դեպքում է հնարավոր եզրակացությունը տարածել ամբողջ խմբաքանակի վրա, իսկ այս դեպքում նմուշառումն իրականացվել է ոչ ընդհանուր տարայից, ոչ էլ ապահովվել է «միջին նմուշի» կարգը և նույնիսկ կասկածելի է ինչ սնունդ է փորձաքննվել:

Հենց այս պատճառով էլ <<Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն>> ՊՈԱԿ-ի կողմից 13.11.2018թ. տրված եզրակացությամբ անդրադարձել է վերոնշված խնդրին, որով հայտնել է, որ «ՄԱՎԱՍ գրուպ» ՍՊԸ-ի աշխատակիցները չեն կարող տալ որևէ եզրակացություն նմուշառման գործընթացի գործող նորմատիվներին համապատասխանելու վերաբերյալ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ «Հայարփի Քալանթարյան» Ա/Ձ-ն դեռևս 13.12.2018թ.-ին (այսինքն մինչ <<Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում>> ներառելու նպատակով ընթացակարգի նախաձեռնումը)՝ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենին ուղղված գրությամբ խնդրել է վերանայել «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին որոշումը՝ այն անհիմն լինելու հիմնավորմամբ, քանի որ սննդի փորձաքննությունները իրականացվել են վերոնշված խախտումներով, ինչպես նաև փորձաքննության եզրակացության հիմքում դրվել են Հայաստանում երկար ժամանակ չգործող ԳՕՍՏ-եր /նշված փաստը տեսանելի է Ստանդարտների ազգային ինստիտուտի պաշտոնական կայքէջում/: Սակայն մինչ օրս «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ն չի արձագանքել մեր դիմումին /դիմումի պատճեն կցվում է/:

Հայտնում ենք նաև, որ «Հայարփի Քալանթարյան» Ա/Ձ-ն հանդիսանում է իր ոլորտի

լավագույն ներկայացուցիչներից մեկը և այս տարիների ընթացքում հասցրել է դրսևորել իրեն որպես պարտաճանաչ և վստահելի գործընկեր, և հենց դրանով է պայմանավորված, որ վերջին տարիներին «Հայարփի Քալանթարյան» Ա/Ձ-ի կողմից մատակարարվող պատրաստի սնունդը միշտ վերահսկվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կողմից և երբևէ չի արձանագրվել որևէ խախտում և հենց այդ պատճառով դիմել ենք ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն, որպեսզի նախաձեռնվի բոլոր հնարավոր պատժի միջոցները «Մավաս գրուպ» ՍՊԸ-ին՝ փորձարկումները Հայաստանում չգործող ԳՕՍՏ-երով փորձարկումներ իրականացնելու վերաբերյալ, քանի որ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու համար հիմք է հանդիսացել «Մավաս գրուպ» ՍՊԸ-ի կողմից տրված անօրինական փորձագիտական եզրակացությունը»:

Ամփոփելով վերոգրյալը, Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ն խնդրել է հաշվի առնել ներկայացված փաստերը և օրենքի խախտմամբ կատարված և կազմված փորձագիտական եզրակացության հիման վրա «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու հիմքով Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ին չներառել <<Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/207 ընթացակարգի շրջանակներում 19.12.2018թ. ժամը 10:10-ին և 28.12.2018թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 28.12.2018թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստին ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>«Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 10.12.2018թ. գրությամբ հայտնել է, որ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ն միակողմանի լուծարել է 01.03.2018թ. կնքված թիվ ՆՀԿ-ԲՄԾՁԲ-18/1 պատրաստի սննդի մատակարարման ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագիրը: Պայմանագրի կողմը հանսիսանում է Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ն, որը չի մատուցել պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված ծառայությունների տեխնիկական բնութագրերին համապատասխան ծառայություններ: «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ն Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ի կողմից մատակարարված պատրաստի սնունդը մի քանի անգամ լաբորատոր փորձաքննության է ենթարկել և այդ փորձաքննությունների արդյունքում ի հայտ են եկել մի շարք անհամապատասխանություններ պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրերի համեմատ:

Վերոհիշյալ գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ ուղարկում է Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ի տվյալները սև ցուցակում ներառելու համար, ինչպես նաև սննդի լաբորատոր փորձաքննությունների արդյունքները:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/207 ընթացակարգի շրջանակներում 19.12.2018թ. ժամը 10:10-ին և 28.12.2018թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>4. ՍՑ-ԱՄ-2018/207 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ԱՄ-2018/207 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «ՀՀ ԱՆ Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի և Հայարփի Քաղաքապետարանի Ա/Ձ-ի միջև 01.03.2018թ. կնքվել է «ՆՀԿ-ԲՄԾՁԲ-18/1» ծածկագրով ծառայությունների մատուցման գնման պայմանագիր, որի 1-ին կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը (տվյալ դեպքում՝ Հայարփի Քաղաքապետարանի Ա/Ձ-ն) ստանձնում է պատրաստի սննդի մատակարարման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

2.Նույն կետի 1.2 ենթակետով սահմանվում է. որ ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

3. Պայմանագրի 2-րդ կետի 2.1.3 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

4. Պայմանագրի 2.2.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն պարտավոր է քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

5. Պայմանագրի թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է, որ սննդի օրական միջին չափաբաժինները պետք է համապատասխանեն ՀՀ Կառավարության 26 մայիսի 2011 թվականի N 711-Ն որոշմամբ հաստատված չափաբաժիններին և ապահովեն սննդամթերքի հիմնական սննդանյութերի և էներգետիկ արժեքի տվյալները /ըստ ստորև բերված աղյուսակների/:

Նախաճաշի մատակարարումները պետք է իրականացվեն մինչև ժամը 09:00:

Ճաշի մատակարարումները պետք է իրականացվեն մինչև ժամը 14:00:

Ընթրիքի մատակարարումները պետք է իրականացվեն մինչև ժամը 20:30:

Յուրաքանչյուր սննդի միավոր պետք է փաթեթավորված լինի առանձին սննդի համար նախատեսված տոպրակներով և տարաներով, որոնք պետք է համապատասխանեն ՀՀ Կառավարության 25.05.2005, N679-Ն որոշմամբ հաստատված <<Սննդամթերքի հետ շփվող պոլիմերային և այդ հիմքով պլաստմասսայե արտադրանքների տեխնիկական կանոնակագին>>:

Տաք սննդի տարաները պետք է նախատեսված լինեն միկրոալիքային վառարանների համար:

Մատակարարվող սննդի փաթեթներում ներառված ապրանքները պետք է փաթեթավորված լինեն առանձին՝ սննդի համար նախատեսված տոպրակներով կամ տարաներով, ընդ որում փաթեթներում առկա ապրանքատեսակները պետք է համապատասխանեն ապրանքատեսակների տեխնիկական բնութագրերին:

Հիվանդների առավելագույն քանակը՝ 41

Օրերի առավելագույն քանակը՝ 365

6. Պայմանագրի թիվ 1 հավելվածով Պայմանագրի կատարման ժամկետի սկիզբ է սահմանվել Պայմանագրի համար համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսելուց հետո լրացուցիչ համաձայնագրի կնքման պահից, իսկ ավարտը՝ 2018թ. դեկտեմբերի 15-ը:

7. Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ին ուղղված 08.11.2018թ. թիվ 4295 գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ 2018 թվականի հոկտեմբերի 25-ին «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ի ներկայացուցչի հետ համատեղ իրականացվել է Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ի կողմից մատակարարված սննդից, ճաշի ժամին տրամադրվող սննդամթերքից՝ մակարոնով ապուրից, հավի մսով ցորենաձավարով հարիսայից, բարձր տեսակի ալյուրից հացից և մասուրի հյութից նմուշների հանձնումը «ՄԱՎԱՍՍ Գրուպ» ՍՊԸ փորձարկման լաբորատորիայում՝ մանրէաբանական հետազոտության:

Ամփոփելով վերոհիշյալ գրությունը Պատվիրատուն հայտնել է, որ առաջացած թերությունները չվերացվելու դեպքում Պատվիրատուն Պայմանագիրը միակողմանի կլուծի:

8. 07.12.2018թ. պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ Պատվիրատուն «Նարկոլոգիական հանրապետականկենտրոն» ՓԲԸ-ի և Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ի միջև 01.03.2018թ. կնքված պատրաստի սննդի մատակարարման պետական գնման թիվ <<ՆՀԿ-ԲՄԾՁԲ-18/1>> պայմանագիրը միակողմանի լուծել է՝ Պայմանագրի 2.1.3.-րդ կետի <<ա>> ենթակետի ուժով, այն հիմնավորմամբ, որ Կատարողի կողմից մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին: Վերոհիշյալ պայմանագրի լուծման հիմքում դրվել է <<ՄԱՎԱՍ Գրուպ>> ՍՊԸ-ի կողմից տրված սննդամթերքի մանրէաբանական հետազոտության համապատասխան արձանագրությունները:

Մասնավորապես, <<ՄԱՎԱՍ Գրուպ>> ՍՊԸ-ի կողմից 01.11.2018թ. սննդամթերքի մանրէաբանական հետազոտության թիվ 568 և թիվ 268/2 արձանագրությունների համաձայն՝ մակարոնով սուպի, հավի մսով ցորենաձավարով հարիսայի և մասուրի հյութի մեջ հայտնաբերվել են անհամապատասխանություններ:

Այնուհետև, <<ՄԱՎԱՍ Գրուպ>> ՍՊԸ-ի կողմից 15.11.2018թ. սննդամթերքի մանրէաբանական հետազոտության թիվ 590/2 և թիվ 590/3 արձանագրությունների համաձայն՝ կարտոֆիլով և մսով սուպի և թանի մեջ հայտնաբերվել են անհամապատասխանություններ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 13.12.2018թ. թիվ 27/26-3/23226-18 գրությունը, ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի 10.12.2018թ. գրությունը և կից փաստաթղթերը, Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ի 26.12.2018թ. և 09.01.2019թ. գրությունները՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի

(պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. ***խախտել է պայմանագրով նախատեսված*** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած ***պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը*** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

«ՀՀ ԱՆ Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի և Հայարփի Քաղանթարյան Ա/Ձ-ի միջև 01.03.2018թ. կնքվել է «ՆՀԿ-ԲՄԾՁԲ-18/1» ծածկագրով ծառայությունների մատուցման գնման պայմանագիր, որի 1-ին կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը (տվյալ դեպքում՝ Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ն) ստանձնում է պատրաստի սննդի մատակարարման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Նույն կետի 1.2 ենթակետով սահմանվում է. որ ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրի 2-րդ կետի 2.1.3 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Պայմանագրի 2.2.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն պարտավոր է քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

Պայմանագրի թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է, որ սննդի օրական միջին չափաբաժինները պետք է համապատասխանեն ՀՀ Կառավարության 26 մայիսի 2011 թվականի N 711-Ն որոշմամբ հաստատված չափաբաժիններին և ապահովեն սննդամթերքի հիմնական սննդանյութերի և էներգետիկ արժեքի տվյալները /ըստ ստորև բերված աղյուսակների/:

Նախաճաշի մատակարարումները պետք է իրականացվեն մինչև ժամը 09:00:

Ճաշի մատակարարումները պետք է իրականացվեն մինչև ժամը 14:00:

Ընթրիքի մատակարարումները պետք է իրականացվեն մինչև ժամը 20:30:

Յուրաքանչյուր սննդի միավոր պետք է փաթեթավորված լինի առանձին սննդի համար նախատեսված տոպրակներով և տարաներով, որոնք պետք է համապատասխանեն ՀՀ Կառավարության 25.05.2005, N679-Ն որոշմամբ հաստատված <<Սննդամթերքի հետ շփվող պոլիմերային և այդ հիմքով պլաստմասսայե արտադրանքների տեխնիկական կանոնակագին>>:

Տաք սննդի տարաները պետք է նախատեսված լինեն միկրոալիքային վառարանների համար:

Մատակարարվող սննդի փաթեթներում ներառված ապրանքները պետք է փաթեթավորված լինեն առանձին՝ սննդի համար նախատեսված տոպրակներով կամ տարաներով, ընդ որում փաթեթներում առկա ապրանքատեսակները պետք է համապատասխանեն ապրանքատեսակների տեխնիկական բնութագրերին:

Հիվանդների առավելագույն քանակը՝ 41

Օրերի առավելագույն քանակը՝ 365

Պայմանագրի թիվ 1 հավելվածով Պայմանագրի կատարման ժամկետի սկիզբ է սահմանվել Պայմանագրի համար համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսելուց հետո լրացուցիչ համաձայնագրի կնքման պահից, իսկ ավարտը՝ 2018թ. դեկտեմբերի 15-ը:

Կողմերի միջև Պայմանագրի համաձայն՝ կնքվել է Համաձայնագիր N 1-ը, որով հավելված 2-ի համաձայն՝ սահմանվել է վճարման ժամանակացույցը:

Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ին ուղղված 08.11.2018թ. թիվ 4295 գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ 2018 թվականի հոկտեմբերի 25-ին «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ի ներկայացուցչի հետ համատեղ իրականացվել է վերջինիս կողմից մատակարարված սննդից, ճաշի ժամին տրամադրվող սննդամթերքից՝ մակարոնով ապուրից, հավի մսով ցորենաձավարով հարիսայից, բարձր տեսակի ալյուրից հացից և մասուրի հյութից

նմուշների հանձնումը «ՄԱՎԱՍՍ Գրուպ» ՍՊԸ փորձարկման լաբորատորիայում՝ մանրէաբանական հետազոտության:

07.11.2018թ. ստացված նմուշների փորձարկման արձանագրությունների համաձայն՝ սննդի մեջ հայտնաբերվել են անհամապատասխանություններ:

Ամփոփելով վերոհիշյալ գրությունը Պատվիրատուն հայտնել է, որ առաջացած թերությունները չվերացվելու դեպքում Պատվիրատուն Պայմանագիրը միակողմանի կլուծի:

07.12.2018թ. պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ Պատվիրատուն «Նարկոլոգիական հանրապետականկենտրոն» ՓԲԸ-ի և Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ի միջև 01.03.2018թ. կնքված պատրաստի սննդի մատակարարման պետական գնման թիվ «ՆՀԿ-ԲՄԾՁԲ-18/1» պայմանագիրը միակողմանի լուծել է՝ Պայմանագրի 2.1.3.-րդ կետի «ա» ենթակետի ուժով, այն հիմնավորմամբ, որ Կատարողի կողմից մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին: Վերոհիշյալ պայմանագրի լուծման հիմքում դրվել է «ՄԱՎԱՍ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից տրված սննդամթերքի մանրէաբանական հետազոտության համապատասխան արձանագրությունները:

Մասնավորապես, «ՄԱՎԱՍ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 01.11.2018թ. սննդամթերքի մանրէաբանական հետազոտության թիվ 568 և թիվ 268/2 արձանագրությունների համաձայն՝ մակարոնով սուպի, հավի մսով ցորենաձավարով հարիսայի և մասուրի հյութի մեջ հայտնաբերվել են անհամապատասխանություններ:

Այնուհետև, «ՄԱՎԱՍ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 15.11.2018թ. սննդամթերքի մանրէաբանական հետազոտության թիվ 590/2 և թիվ 590/3 արձանագրությունների համաձայն՝ կարտոֆիլով և մսով սուպի և թանի մեջ հայտնաբերվել են անհամապատասխանություններ:

ՍՑ-ԱՄ-2018/207 ընթացակարգի շրջանակներում Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ն հայտնել է, որ 2018թ. հոկտեմբերին «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ից տեղեկացվել է, որ ցանկանում են մթերքը հանձնել փորձաքննության, որին ի պատասխան՝ «Հայարփի Քալանթարյան» Ա/Ձ-ն խնդրել է սպասել մինչև ներկայանա համապատասխան փորձագետը: Սակայն «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն»

ՓԲԸ-ն առանց սպասելու՝ պահանջել է, որպեսզի սնունդ տեղափոխող մեքենան գնա դեպի համապատասխան մասնավոր լաբորատորիա և արդյունքում նմուշառումն իրականացվել է առանց Ա/Ձ-ի ներկայացուցչի՝ չտրամադրելով որևէ տեղեկատվություն նմուշառման գործընթացի վերաբերյալ:

Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ն հայտնել է նաև, որ <<Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն>> ՊՈԱԿ-ը Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ին ուղղված 13.11.2018թ. թիվ ԵԳ/238-18 գրությամբ հայտնել է, որ Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ի և <<Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն>> ՊՈԱԿ-ի միջև 11.09.2018թ. կնքված թիվ 05/2018 պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ ՊՈԱԿ-ի աշխատակիցները մեկնել են նմուշառման, սակայն տեղեկանալով «ՄԱՎԱՍ գրուպ» ՍՊԸ-ի կողմից նմուշառման գործընթացի վերաբերյալ մեկնել են այնտեղ: Սակայն նշված լաբորատորիայում կազմակերպության աշխատակցին տրամադրվել են նմուշներից որոշ չափաքանակներ՝ չտրամադրելով որևէ տվյալներ նմուշների պատրաստման վերաբերյալ, ուստի <<Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն>> ՊՈԱԿ-ի աշխատակիցները չեն կարող տալ որևէ եզրակացություն «ՄԱՎԱՍ գրուպ» ՍՊԸ-ի կողմից նմուշառման գործընթացի վերաբերյալ, քանի որ վերջիններս ներկա չեն գտնվել նմուշառման գործընթացին:

Միաժամանակ Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ն հայտնել է, որ վերը նշված խնդրի հետ կապված դիմել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությանը, որի վերաբերյալ 25.12.2018թ. թիվ 8358-18 գրությամբ ստացվել է պատասխան, որտեղ նշվում է, որ «ՄԱՎԱՍ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից չգործող Ն/Փ ԳՕՍ-երով փորձաքննության մասին ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը տեղեկացրել է ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությանը՝ խնդրելով ձեռնարկել քայլեր՝ բացառելով նման փորձաքննությունների անցկացումը:

Այսպիսով ուսումնասիրելով 07.12.2018թ. Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման հիմքերը, այն է «ՄԱՎԱՍ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 01.11.2018թ. և

15.11.2018թ. սննդամթերքի մանրէաբանական հետազոտության թիվ 568, թիվ 268/2, թիվ 590/2 և թիվ 590/3 արձանագրությունները, որոնց համաձայն՝ Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ի կողմից Պայմանագրի շրջանակներում մատակարարված սննդի մեջ հայտնաբերվել են անհամապատասխանություններ, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 16-ի N 1142-Ն որոշմամբ հաստատված «Սննդամթերքի անվտանգության եվ անասնաբուժության ոլորտներում պետական վերահսկողության շրջանակներում իրականացվող նմուշառման» կարգի 3-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ փորձարկման (փորձաքննության) համար նմուշառումն իրականացնում, նմուշները ծածկագրում, դրոշմակնքում կամ կապարակնքում և նմուշառման ակտը ձևակերպում է լիազոր մարմնի տեսուչը՝ ապրանքը տնօրինողի կամ նրա ներկայացուցչի մասնակցությամբ:

Նույն կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ տեղում նմուշառման վերաբերյալ լիազոր մարմնի տեսուչի կողմից կազմվում է նմուշառման ակտ (N 1 ձև), որտեղ նշվում են՝

1) նմուշառման վայրը, տարեթիվը, ամիսը, ամսաթիվը և ժամը.

2) ապրանքի անվանումը, ծագման երկիրը, արտադրողի և մատակարարի (վաճառողի) անվանումները (անունը, հայրանունը, ազգանունը).

3) նմուշառում իրականացնող տեսուչի պաշտոնը, անունը, հայրանունը, ազգանունը.

4) արտադրողի կամ ապրանքն իրացնող, պահող կամ փոխադրող կազմակերպության ներկայացուցիչների պաշտոնները, անունները, հայրանունները, ազգանունները, որոնց ներկայությամբ իրականացվում է նմուշառումը.

5) պիտանիության ժամկետը.

6) լոտի համարը և չափը (քանակը, զանգվածը, ծավալը).

7) ընտրված նմուշների, այդ թվում՝ պահեստային նմուշի (առկայության դեպքում) չափը (քանակը, զանգվածը, ծավալը).

8) նմուշառված ապրանքի պահպանման պայմանները.

9) տվյալ ապրանքի ստանդարտացման փաստաթղթին հղումը:

Նույն կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ նմուշները պահպանում ու տեղափոխում է լիազոր մարմնի տեսուչը՝ (սննդամթերքի անվտանգության և անասնաբուժության ոլորտներում պետական վերահսկողություն իրականացնող պետական մարմին)

Հայաստանի Հանրապետության օրենսդրության, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերով նախատեսված պահանջներով:

Կարգի 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ սույն կարգը ենթակա է կիրառման՝ սննդամթերքի անվտանգության և անասնաբուժության ոլորտներում պետական վերահսկողություն իրականացնող պետական մարմնի (այսուհետ՝ լիազոր մարմին)՝ ապրանքի արտադրության ու շրջանառության փուլերում գործառույթներ իրականացնող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի (այսուհետ՝ ապրանքը տնօրինող), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նշանակված համապատասխանության գնահատման մարմնի (փորձարկման լաբորատորիայի) կողմից:

Այսպիսով ՍՑ-ԱՄ-2018/207 ընթացակարգի շրջանակներում «Հայարփի Քալանթարյան» Ա/Ձ-ն հայտնել է, որ փորձարկումները իրականացվել են առանց «Հայարփի Քալանթարյան» Ա/Ձ-ի ներկայացուցչի մասնակցության, միաժամանակ Պատվիրատուն գործում առկա նյութերով հայտնել է, որ «Մավաս-Գրուպ» ՍՊԸ-ի կողմից փորձարկումները իրականացվել են «Հայարփի Քալանթարյան» Ա/Ձ-ի ներկայացուցչի մասնակցությամբ, մինչդեռ արձանագրում եմ, որ գործում բացակայում է ՀՀ կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 16-ի N 1142-Ն որոշմամբ հաստատված «Սննդամթերքի անվտանգության եվ անասնաբուժության ոլորտներում պետական վերահսկողության շրջանակներում իրականացվող նմուշառման» կարգի 8-րդ ենթակետով նախատեսված նմուշառման ակտը, որով կփաստվեր, որ նմուշառումն իրականացվել է վերը նշված կարգի պահանջներին համապատասխան:

Միաժամանակ արձանագրում եմ, որ «Մավաս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից արտադրանքի նմուշների փորձարկման վերաբերյալ տրամադրված եզրակացությունները չեն կարող համարվել իրավաչափ, քանի որ փորձարկումները իրականացվել են ԳՕՍՏ-երով՝ ՆՓ-10444.2-94 և 30518-97, որոնք Հայաստանում չեն գործում:

Այսպիսով, Պայմանագրի 2.1.3 կետը սահմանում է, որ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե

մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Վերը նշված փաստերով պայմանավորված, գտնում եմ, որ Պատվիրատուն ՀՀ կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 16-ի N 1142-Ն որոշմամբ հաստատված «Սննդամթերքի անվտանգության եվ անասնաբուժության ոլորտներում պետական վերահսկողության շրջանակներում իրականացվող նմուշառման» կարգի խախտմամբ կատարված և Հայաստանում չգործող ԳՕՍՏ-երով իրականացված փորձագիտական եզրակացության հիման վրա միակողմանի լուծելով Պայմանագիրը գործել է ոչ իրավաչափ, ուստի նման փաստական հանգամանքներով պայմանավորված, գտնում եմ, Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ն թույլ չի տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, հետևաբար Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 13.12.2018թ. թիվ 27/26-3/23226-18 գրությամբ Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ին (ՀՎՀՀ՝ 84267968) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ